

Bridgeport

Թիւ 1908
Փետրուար 16, 1961

Բարեշնորհ

Տրիկոր Մրկ. Ոսկանեան
Հոգեւոր Սահակարար եւ Նախադահ Սխական Խորհուրդի
Ա. Համբարձում Եկեղեցւոյ
Պրինփորթ.

Սիրելի Գրիգոր Սարկաւագ,

Ստացած ենք 1961. Փետրուար 6 թուակիր Ձեր տեղեկադիրը,
որով կը հաղորդէի թէ Ձեր նախադահութեամբ՝ Յունուար 29ին գու-
մարուած Սխական ժողովը կատարած է Սխական Խորհուրդի մասնակի
ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խօն-
դըրէ ընտրուած անձերուն զաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Սխական ժողովը տեղի ունեցած
է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտըր-
ուած անձերը, իբրև Եկեղեցւոյդ նախունախնդիր ու Նուիրեալ ան-
դամներ, կը վայելեն Ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու
կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ Հետեւեալին.-

Տիագը՝ Վարդան Խթիկեան
Ճէպ Խաչատուրեան
Տօքթ. Դերճ Հայրապետեան
Տիգրան Նաճարեան
Անահի Թորայեան

Օրհնելով նորընտիր անզամները՝ կը մաղթենք Ձեզի եւ պատ-
ուարժան Սխական Խորհուրդիդ յաջող եւ արդիւնաւոր գործունեութիւն,
ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն Ա. Եկեղեցւոյդ ու ի շինու-
թիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիերաւանդ սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՐՆ ԱՐԹԵԳԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի